ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 դեկտեմբերի 2022 թվականի N 640-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԹԻՎ 143 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԷԼԵՆ, ԷԼԻԶ ԱՐԱՅԻԿԻ ԲԵԳԼԱՐՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 42-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 14 նիստի եզրակացությունը և Լուսինե Շահենի Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի ղեկավարի 2016 թվականի հուլիսի 28-ի՝ «Արսեն Արամայիսի Բեգլարյանին Էլեն Արայիկի Բեգլարյանի հոգաբարձու և Էլիզ Արայիկի Բեգլարյանի խնամակալ նշանակելու մասին» թիվ 143 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի բնակիչներ Էլեն, Էլիզ Արայիկի Բեգլարյանների խնամքը և դաստիարակությունը հանձնել մորը՝ Լուսինե Շահենի Սարգսյանին:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 դեկտեմբերի 2022 թվականի N 641-Ա

ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 28 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 33-րդ, 35-րդ, 37-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշմամբ հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 1-ին կայացած թիվ 13 նիստի եզրակացությունը, Քնարիկ Սեդրակյանի, Շահեն Քոչարյանի կողմից ներկայացված համաձայնագրերը և Միասնական սոցիալական ծառայության պետի առաջին տեղակալի 10.10.2022թ. թիվ 1644 գրությամբ ներկայացված Միասնական սոցիալական ծառայության Եղեգնաձորի տարածքային կենտրոնի նախնական եզրակացությունը/դիրքորոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մալիշկա համայնքի ղեկավարի 2014 թվականի նոյեմբերի 17-ի՝ «Մալիշկա համայնքի բնակիչ Կարեն Գրիգորի Քոչարյանի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին» թիվ 28 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի բնակիչ Կարեն Գրիգորի Քոչարյանի (ծնված 01.04.2007թ) նկատմամբ սահմանել հոգաբարձություն, և հոգաբարձու նշանակել Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի բնակիչ Շահեն Խաչիկի Քոչարյանին (ծնված 01.02.1954թ), ով հանդիսանում է Կարեն Գրիգորի Քոչարյանի հայրական պապը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 05
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 դեկտեմբերի 2022 թվականի N 642-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 611-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 187 ՔՄ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ.-ի թիվ 1730-Ն որոշումների դրույթներով, հիմք ընդունելով 2016 թվականի փետրվարի 5-ի ժառանգության իրավունքի վկայագիրը և քաղաքացու դիմումը և այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 146-Ա որոշմամբ ժառանգության իրավունքի վկայագրում նշված ավել օգտագործվող հողը ճանաչվել է համայնքային սեփականություն.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 10-ի՝ «Բնակելի տան, օժանդակ կառույցների, ավել օգտագործվող 178 քմ բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման և հասցեի տրամադրման մասին» թիվ 611-Ա որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Ճանաչել Մուշեղ Սիսակի Դավթյանի (ծնված՝ 1960թ.), Տատյանա Ավետի Դավթյանի (ծնված՝ 1967թ.), Սիսակ Մուշեղի Դավթյանի (ծնված՝ 1987թ.) և Սևակ Մուշեղի Դավթյանի (1988թ.) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը՝ Եղեգնաձոր համայնք Եղեգնաձոր բնակավայր Ա. Խանջյան փողոց, 14 բնակելի տան, օժանդակ կառույցների և ավել օգտագործվող 187 քմ հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշման առաջին կետում նշված ավել օգտագործվող 187 քառ. մ հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Ա. Խանջյան փողոց, 14 բնակելի տուն:

4. Բնակելի տունը և օժանդակ կառույցները կառուցվել է մինչև 2001 թ.-ը և բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 06
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
06 դեկտեմբերի 2022 թվականի N 643-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Արթուր Ռաֆիկի Մովսիսյանի անունով հաշվառված բնակելի տանը և տնամերձ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք. Վ. Համբարձումյան փողոց, 1-ին նրբանցք, 7 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 06
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
07 դեկտեմբերի 2022 թվականի N 644-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ.-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլուխը, հաշվի առնելով ավագանու 17.01.2022թ-ի թիվ 06-Ն որոշումը և նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներին, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Պռոշյան փողոց, թիվ 5 հողամաս հասցեում գտնվող, քաղաքացի Արմենուհի Գրիշայի Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 12052020-10-0012 վկայական) հողատարածքում

ինքնակամ կառուցված 129,30 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը և կից կառույցները համարել օրինական (որակավորում ունեցող անձի կողմից չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022PDSFT8):

2. Առաջարկել կառույցն իրականացրած Արմենուհի Գրիշայի Բաղալյանին /նույնականացման քարտ N 003562121, տրված 12.12.2014թ., 037-ի կողմից/, 1քմ շինության օրինականացման համար վճարել՝ 1422 /մեկ հազար չորս հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ, ընդամենը 183 900 /մեկ հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3. Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 07
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 դեկտեմբերի 2022 թվականի N 645-Ա

ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ռուզաննա Զուբարի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ1729921 վկայական) առևտրի սրահը վեահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր քաղաք, Գ.Նարեկացու փողոց, 8/4առևտրի սրահ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անձին առձեռն հանձնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2022թ. դեկտեմբերի 07
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 դեկտեմբերի 2022 թվականի N 646-Ա

ՀՐԱՀԱՏ ՖՈԼԻԿԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԵՐԱՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29/12/2005թ. N 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հրահատ Ֆոլիկի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող Կամոյի փողոց 2/13 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01092022-10-0026 վկայական), Կամոյի փողոց 13/2 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31082022-10-0029 վկայական) հասցեներում գտնվող հողամասերը վերամիավորել և տրամադրել հետևյալ հացեն՝ համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Կամոյի փողոց, 2/13 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2022թ. դեկտեմբերի 08
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 դեկտեմբերի 2022 թվականի N 647-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջը և <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝ Վարդան Խաչատրյանի դիմումը/մուտքի թիվ 1184/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության արոտավայր, վարելահող /կադաստրային ծածկագիր 10-014-0128-0051/, 3.64757 հա-ից 0.8371 հա արոտավայր հողատեսքը ցածրարժեքից փոխադրել բարձրարժեքի:

2. 0.8371 հա հողատեսքը փոխադրվում է որպես խոտհարք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 09
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 դեկտեմբերի 2022 թվականի N 648-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 5-րդ կետը, <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վարդան Խաչատրյանի դիմումը և ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 28-ի N 11 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.4973 հա գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք վարելահողը /կադաստրային ծածկագիր 10-014-0128-0005/ փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի:

2. Հողատեսքը փոխադրվում է որպես խոտհարք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 09
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 դեկտեմբերի 2022 թվականի N 649-Ա

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 5-րդ կետը, <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վարդան Խաչատրյանի դիմումը և ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 28-ի N 11 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. <<Թավիթիան Վինյարդս>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.7 հա գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք վարելահողը /կադաստրային ծածկագիր 10-014-0128-0047/ փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի:

2. Հողատեսքը փոխադրվում է որպես խոտհարք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 09
ք.Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am,yeghegnadzor@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 դեկտեմբերի 2022 թվականի N 650-Ա

ԱՎԱԳ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ ՎԵՐԱՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 29/12/2005թ. N 2387-Ն որոշումը և հաշվի առնելով ավագանու 2022 թվականի հունվարի 17-ի թիվ 06-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ավագ Վարազդատի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող Եղեգնաձոր համայնք, ք., Եղեգնաձոր Ա. Միկոյան փողոց 13/4 ավտոտնակ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29112022-10-0002 վկայական), Ա. Միկոյան փողոց 13/8 ավտոտնակ (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28112022-10-0001 վկայական) հասցեներում գտնվող ավտոտնակները վերամիավորել և տրամադրել հետևյալ հացեն՝ համայնք Եղեգնաձոր ք., Եղեգնաձոր Ա. Միկոյան փողոց 13/4 ավտոտնակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 09
ք.Եղեգնաձոր